

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հաւար
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 »
Կրտսեան հաւար
հաւար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐԵԼԻ
—)
Կրտսեան հաւար 20 սան-
քիւն է. Լեւիհին աւելի աւել-
գաւններու հաւար 20 Օ10
գեղջ կըլնայ:

ՇԱԲԱԹ

Նախակ եւ գրաւ դրկեչ
Խմբագրութեան հասցէին
—
Редакция на вѣстникѣ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ Յ՝ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ԱՍԻԱԿԱՆ ԱՆԻՂՃՈՒԹԻՒՆ

Դեռ տաս տարի առաջ սպա-
տութեան մասին լուրջ կերպով
մտածող, սրտը զոհողութեան
պատրաստ և յեղափոխական դա-
շակաւորով սոգորված հայ այրերն
անդամ շատ սակաւաթիւ էին—
եթէ ոչ բացառութիւն: Բայց,
վերջին տարիների հայկական
արեւնոս, ցնցող կեանքը, իր
երբեմն յուզող և յուսադրիչ
վայրկեաններով, ոչ միայն ազա-
տասէր հայերի թիւը մեծ չափով
ստուարացրեց, այլև ազդեց հայ
կնոջ վրա: Հայ կինն էլ զգաց
սանձակաւ լծի ծանրութիւնը,
նրա ստորացնող բռնութիւնը.
բաղձաց լինել ազատ հայրենիքի
աղջիկ, լինել ազատ մայր և ա-
զատ կին, բազմալը դեռ բաւա-
կան չէր, հայուհին որոշեց իւ-
րովանն աջակցել մեր ազատա-
գրական դժուարին գործին. նա
մասնակցեց մեր յեղափոխու-
թեանը իբր քարոզիչ, կազմա-
կերպող, զէնք փոխադրող. ա-
սիական ընտանիքի մէջ տիրա-
պետող բոլոր արգելքները ոտքի
տակ տալով՝ նա դռնէ դուռ բն-
կաւ, բեմ բարձրացաւ զրամ
ձեռք բերելու թշնամուն սպա-
նելու համար զէնք գնելու. և
այդ բոլորի համար ենթարկվեց
իր անզգայ եղբայրների ու քոյ-
րերի հալածանքին, արհամա-
րանքին և սինիք ծաղրին: Մի
խօսքով, կարճ ժամանակի ըն-
թացքում, հայուհին հասաւ բա-
րոյական այն բարձրութեան՝ որ
պատուաւոր տեղ բռնեց մեր ժա-
մանակակից պատմութեան մէջ.
և մենք ազատ կերպով կարող
ենք ասել թէ—«գնա՛», թէեւ չեմ
կարող գալ, բայց իմ հօգին քեզ
ընկերս սուղբը, սրտնք երբեմն
պատկերացնում էին հայրենա-
սէր կնոջ իդէալականը, այսօր,
հայուհու վերաբերմամբ, հնացել
են. սրով շեռել, հայուհին ոչ
միայն գրոշակ տեղ իր եղբորը,
այլև նրան ընկերացու, նոյն
իսկ բանտարկվեց, արքայից և
զոհվեց: Մենք հրճանքով յայ-

տարարում ենք, որ ճանաչում
ենք այնպիսի անկեղծ, անձնէր
հայրենասէր հայուհիներ, որոնք
շատ բարձր են շատ յեղափոխա-
կան համարված հայերից և ա-
ւելի օգտակար են եղել մեր ա-
զատութեան գործին քան շատ
գործիչներ: Մենք հիանում ենք
ա գ թոյլ համարված էակների
ստ՛ուներութեան և համբու-
թեան վրա, որով նրանք գի-
մանում են սոխական կոպիտ ան-
խղճութիւնից առաջացած ստոր
հալածանքին:
Ուրախանում ենք տեսնելով
հայ կնոջը իբր աջակից և զօրա-
ւիր հայկական յեղափոխութեան
և զլուխ խոնարհում նրանց ար-
ժանիքի առջեւ:
Սակայն չենք կարողանում մեր
զղանքը զսպել զէպի այն հայ
անուս կրող կիները և պարոն-
ները, որոնք իբր վայրենի ա-
սիացիներ, իբր թուրքի հարա-
զատ ստրուկներ, սոխական ան-
խղճութեամբ, թրքական բար-
քերին յատուկ ձեւերով նախա-
տում և հալածում են այն հայու-
հիներին որոնք, իբր զգայուն
և մաքուր հայուհիներ, ամեն
ճիգ թափած են օգտակար հան-
դիսանալ մեր ազատագրական
գործին: Եւ ինչպէ՞ս չը զղվել,
երբ անտու՞մ ես թէ մի ճորդ-
պատ, բուրբոկին բթամիտ, «բայ-
զըն բաքիչոյով հաճոյքի առար-
կայ, առձական հարէմի մի
հարճ, ծաղրում և արհամարում
է մի հայրենասէր հայուհու, որի
ստքերի ազուր անգամ չէ կարելի
փոխել այդ թուրք ուղեղով, ա-
րիւնով և զգայմունքներով կին
կոչված արարածների հետ:
Ինչպէս չը զղվես, երբ տես-
նում ես թէ մի կատարեալ հայ
տաճիկ, այդ ցեղին յատուկ լզիրչ
կոպտութիւնով, իբր արեւելքին
յատուկ անպատկառ սինիք, թոյլ
է տալիս իրան ծաղրել հայրենա-
սէր հայուհու ամենատուրք և նե-
րական զգայմունքները՝ նրա ա-
մենասուրբ պարտականութիւնը
կատարած միջոցին...
Չէ՛, մեր ամենամեծ թշնամին
տաճիկը չէ. այլ հայ-տաճիկը,
զժբախտաբար մեր արիւնակիցը

որը, նոյն իսկ մեր ամենակա-
տաղի թշնամու լեղում, ամեն
տեղ, թէ խանութում, թէ սըր-
ճարանում և թէ ընտանեկան
յարկի տակ, իր թրքացած զա-
ւակների ներկայութեան, հայ-
հոյում և սրբապղծում է այն բո-
լորը, ինչ որ մաքուր հայութեան
համար ամենատուրք և ամենա-
նախականն է: Պէտք է բացար-
ձակապէս արհամարել այդ հողով
և զգայմունքով թուրք հայե-
րին. պէտք է չը նշմարել զբանց
գոյութիւնը և զիմացը եկած մի-
ջոցին, հոտած աղբի կոյտի պէս
ոտքի ծայրով մի կոչմ հրել և
ճամբան շարունակել...
ՎԱՐԳՈ

ՏԵԼԻՔՍ ԾՈՒ

Փետր. քս օր 1841 յունվ. 31ին
ծնած էր Բարիզի մէջ:
Իր սկիզբը շատ համբաս եղած
է. իբր պարզ բանուր կաշիգործի
մը քով աշխատել է եւր, հանգա-
մանքներու բերմամբ հետզհետե
յատաջացած, ինքի գլխուն կա-
շեգործութեամբ զբաղեցաւ և
բաւական մեծ կակ գումար մը կա-
րողացաւ ձեռք բերել: Յետոյ
Հավրի մէջ նաւայարգարութեամբ
պարտպեցաւ ժամանակ մը, ուրկէ
նմանապէս կարելոր շահ մը ու-
նեցաւ:
Երբ իր նիւթական վիճակը
կանոնաւորեց, օր մի քան զրաւ
քաղաքական սուպարէզին մէջ
մտնել, ուր գժբախտաբար ու է
օգտակարութիւն մը չունենալէ
զատ իր աղբին, վնասակար պիտի
ըլլար նոյն իսկ, պաշտպան կանգ-
նելով, օրտնայի ամենէն յուզ-
եալ մէկ շրջանի, այն ազոտու-
թեանց հեղինակներու որոնք
երկրին պատիւ պիտի արատէին:
Օր մի յաջորդաբար քաղաքա-
պետութեան օգնական, վաճառա-
կանական սենեկին նախագահ և
Հավրի յունական հիւպատոսը ե-
ղած է: Ժամանակ մը զինուորա-
կան սուպարէզին մէջ մտնելով,
Վերսայի բանակին հետ կուտե-
ցաւ իր բուն ազատասէր հայրե-
նակիցներուն զէմ: Այս արիւ-

նալի կուտին ժամանակ էր որ,
1871 մայիսին Լէժիոն Մոնէօնի
ասպետ կոչուեցաւ:
1881ին Հավրի երեսփոխան
ընտրուեցաւ: Իր քաղաքական
ամբողջ կեանքին մէջ, ամենէն
յետադէմ պահպանողականը եղաւ.
ինք կուտեցաւ ու քուէարկեց իշ-
խաններու արտաքսման օրէնքին և
Սահմանադրութեան վերաքննու-
թեան դէմ: Տիրիւրի դահլիճին
մէջ, ծովային նախարար կար-
գուեցաւ: Իր օրով էր որ կազ-
մակերպուեցաւ Մատակաւարի
ձախող արշաւանքը, որուն մէջ
13—14,000 ֆրանսացի զինուոր
կտարուեցան, լոկ բանակին ան-
խորհուրդ կազմակերպութեան
հետեւանքով: Ու հայրենասէր
ֆրանսացիները անգութ ջարդե-
րով, տէր դարձան խեղճ բնիկնե-
րու երկրին, որոնք ոչ մէկ վնաս
հասուցած չէին ֆրանսացիներուն:
նմանապէս այս նախարարութեան
օրով էր որ առաջին անգամ ծա-
ղեցաւ Տրէյֆիւսի, դարուս ա-
մենէն անարգ խնդիրը:
Երբ 1895 յունվ. 15ին Գաղի-
միո-Բէռլէ հրաժարեցաւ Հանրա-
պետութեան նախագահի պաշտօ-
նէն, մինչեւ այսօր խորհրդաւոր
մնացած պատճառներով, ըստ
սովորութեան նոյն ամսոյն 16ին
Վէրսայի մէջ հաւաքուած Վե-
հաժողովը, կրկին քուէարկու-
թեամբ Փէլիքս Թոնը նախագահ
ընտրեց 361ի դէմ 430 քուէով,
801 քուէարկուցներու մէջ. բոլոր
զաշնակցած կուսակցութիւնները
բոլոր յետագիմականները Թոնի
ինպատ քուէարկած էին, ու
բոլոր ճշմարիտ ու ազատ հան-
րապետականները՝ Հանրի Պրի-
սոնի ստամ էին իրենց քուէն:
Իր ընտրութեան յաջորդ օրն
իսկ, Գլէմանսօ կը գրէր. «Պրան-
սա զարմանքով պիտի լսէ թէ
Փէլիքս Թոնն է զինքը կառավա-
րողը: Մեր նոր նախագահը այն
երջանիկ քաղաքագէտներէն է,
որոնք պատմութիւն չունին...»
Նախագահ եղած՝ Հավրի այս
նաւայարգարը, ինքզինքը կայս-
րերու ու թագաւորների սերուն-
դէն սկսաւ կարծել: Վայրկեան
մը Հանրապետական Պրանսան

կարծես կը գահավիժէր անղգա-
լարար, տեղի տալով ամենէն
կատաղի թագաւորականութեան
մը:

Փէլիքս Փօռ, իբր նախագահ,
յետագիմութեանց պաշտպանը
եղաւ: Այն գէպերը որոնք տեղի
ունեցան իր պաշտօնավարութեան
տակ, չափազանց նոր են մոռ-
նալու համար, և աւելորդ է ման-
րամանօրէն յիշատակել: Իր
գործը դատելու համար, կը բաւէ
ակնարկ մը նետել այն վիճակին
վրայ, ուր Փօռ ձգեց Հանրապե-
տութիւնը: Կըրակաւութիւնը
ու վաղուց անհետացած միապե-
տութեանց մնացորդները և ա-
նոնց շերտ կամ կեղծ կուսակից-
ները, իր ճշմարիտ խորհրդա-
կաններն ու ներշնչողներն էին:
Երբեք, և ոչ իսկ Պուլանժէակա-
նութեան ժամանակ, այդ դառա-
կարգը չէր կրցած այնքան գլուխ
բարձրացնել:

Այն ահարկու գործին մէջ որ
տան և հինգ ամիսներէ ի վեր
Փրանսան տակն ու վրայ կընէ,
Փէլիքս Փօռ կատաղի պաշտպան
հանդիսացաւ կեղծարարներու:
Ձինուորական բարձր պաշտօն-
եաները վստահ էին անոր պաշտ-
պանութիւնը վայելելուն: Ինք
ծովային զօրութեանց նախարար
էր երբ, 1894ին, պատերազմա-
կան նախարար Մէրսիէն, պատե-
րազմական ատենի մը առջեւ,
անմեղ մը կը դատապարտէր: Փօռ
զանոնք պաշտպանելով ինքզինքն
իսկ պաշտպանած կըլլար:

Ասոր հակառակ Փօռ յայտնի
հակակրօնութեամբ մը վերաբեր-
ուեցաւ իր առաջին նախարարու-
թեան, այսինքն Պուրժուայի
դահլիճին, որովհետեւ այս վեր-
ջինը ազատականութեան կամեա-
թիւններ ցոյց կուտար: Անիկա
պաշտպանեց անարգ Մէլիքը ու
իր դահլիճը որ ոչ նուազ աղե-
տաբեր եղաւ նաեւ հայ ազգին
գլխուն: Արդարեւ, այս դահլի-
ճին օրով և չժախուած Հան-
թոյի անտարբեր պաղարիւնու-
թեան հետեւանքով, որոնք ան-
ուղղակի քաջալերութիւններ էին

արիւնուշտ թուրքին, կատար-
ուեցան Հայաստանի քառամեկ
ջարդերը: Այս դահլիճն է որ
ամբողջ ֆրանսական ապականած
մամուլը յաջողեցաւ կաշառել, և
պատրաստել «լուսթեան այն
խորհրդաւոր դատադրութիւնը»—
համբաւաւոր քօնսրբիասօն «իւ-
սիլանսը» որուն զոհ դացին 300
հազար հայ անմեղներ: Հանթօ
փաշա տիպոսը, զոր նոյն իսկ
ֆրանսական թերթերը տուին
այդ նախարարին, արգէն բա-
ւական պերճախօս է ինքնին:
Ամբողջ աշխարհ հասկցած է այ-
ժմ որ, եթէ Մէլիքի դահլիճը
Ռուսիան չի քաջալերէր, հայկա-
կան ջարդերը տեղի չի պիտի ու-
նենային:

Իր նախարարութեան օրով կա-
տարուած գլխաւոր գործը եղաւ
Փրանքօ-Ռուսիան դաշնակցու-
թեան հրապարակային նուիրա-
գործումը, իր Ռուսոն ճամբոր-
դութեամբ, Նիքօլա Բին Բարիզ
այցելութեամբ և Փօռի Ռուսիա
ճամբորդութիւնը: Փէլիքս Փօռի
օրով այս երկիակ դաշնակցու-
թիւնը պաշտօնապէս ճանչցուե-
ցաւ, բայց զայն պատրաստող-
ներն էին Քաղմիր. Բէրիէ և Ռի-
պօ:

«Ահա այն մարդը, կը գրէ «Ս-
ռօն», որ կունենտանայ. Հանրա-
պետութեան նախագահ մը որուն
բոլոր գործերը հանրապետական
ծրագրին ժխտումն իսկ եղան, ի-
րաւունքի հայհոյիչ մը, անի-
րաւութեան շահատակ մը»:

Փէլիքս Փօռ անցեալ ամիս իր
նախագահութեան չորրորդ տա-
րին աւարտած էր:

Ձարմանալի զուգահեռութեամբ
մը դարձեալ Տիւրիւի նախարար-
ութեան օրով, չորս տարի ա-
ռաջ Լիօնի մէջ կը սպաննուէր
գժբաղդ նախարարութեամբ Քառ-
նօ, Քաղմիրօ անուն անիշխանա-
կանի մը ձեռքով:

Փէլիքս Փօռ Փրանսական Հան-
րապետութեան վեցերորդ նա-
խագահն էր: Իր նախորդներն
էին. Թիէր, Մաք-Մահոն, Ժիւլ

Կրէվի, Սառի Քառնօ, Քաղմիր
Բէրի:

Պէտք է յիշել նաեւ որ ասոնց-
մէ միայն Թիէրն է որ կրցած է
իր պաշտօնավարութեան և օթն-
եակն աւարտել: Միւս հինգը
հրաժարած կամ մեռած են ա-
ռանց պաշտօնավարութեան շըր-
ջանը լրացուցած ըլլալու:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւաջ 4 փետր.

Յունի. 28ին տեղս ժամանեց
համայն Եւրոպոյ հայ գաղութին
հոգեւոր հովիւը, Գեոր. Տ. Գէորգ
Եպս. Ի. Թիւճեան: Երէկոյեանը
ժամը չորս և կէսին, տեղոյս քա-
հանան, Արթ. Տ. Եղիշէ Ներսէսեան,
Երեւելի աղագայիններէն ժան
Պրիւքլու և ուրիշներ գիմաւորե-
լու գացին նորին Գերապատու-
թիւնը որ Պօթուշան քաղաքէն
կուգար:

Ամսոյն 31ին, կիրակի օր,
Նորին Գերապատուութիւնը Ս.
Աստուածածնայ եկեղեցիին մէջ
փառաւոր պատարագ և պաշտօնը
կատարեց: Հայ և Ռուսիան խուռն
բազմութեան մը ներկայութեա-
նը:

Արարողութեանց միջոցին Տ.
Եղիշէ նախ կարգաց ընդհ. հայոց
Հայրապետին կողմէն Եւրոպոյ
հայ գաղթականութեան ուղղուած
կոնդակը, որուն մէջ արեւոր
Հայրապետը Ռուսիան հայոց յոր-
դոր կը կարգայ միշտ իրենց և
կեղեցին շէն պահել, չամշնալ
հայ անունը կրելու և չուրանան
իրենց նախահօր Հայ աշխուհը:

Կը յորդորէ նաեւ Տէր հայրը,
որպէս զի իր նուիրական պաշտօ-
նը միշտ խղճի մտօք կատարէ և
հոգ տանի ժողովրդին հոգեւոր
պէտքերուն մատակարարութեան:

Ս. Հայրապետին կոնդակը ա-
ւարտելուն, Եւթիւճեան Եպիսկո-
պոս քարոզ խօսեցաւ. ուրախու-
թիւն յայտնեց որ Եւաջի հայե-
րը կարողացած են հայութեան
կայծը դեռ վառ պահել ի-
րենց սրտերուն մէջ: Ըհտոյ
չնորհակալութիւն յայտնեց թա-

ղական խորհրդոյ անդամներուն
և ընդհանրապէս քաղաքին ամ-
բողջ հայ հասարակութեան իրեն
գէմեղած ընդունելութեան հա-
մար: Գէորգ Եպիսկոպոս իր քա-
րոզը վերջացուց բարեմաղթու-
թիւններ ընելով աղգին և երկ-
րին զարգացման ու բարգաւաճ-
ման համար, և երկար օրեր
մաղթելով Ռուսիայի թագաւոր
կառօյտին, որպէս զի իր հովա-
նաւորութեան տակ գտնուած բո-
լոր հայերը ազատ և ապահով
կեանք մը վարեն:

Սրբապանը փետր. 1ին մեկնե-
ցաւ գէպի Սուչովա:
Ա. Ե. Ն.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

Գրեթէ ինքնարոյս բանջարե-
ղէններու անտակներէն զառ-
մշակուած բանջարեղէններուն
մէջ հազիւ սոխը, լուրիան, կա-
ղամը ու շոգամը ծանօթ են Սա-
ռուի մէջ: Ինքնարոյս բանջարե-
ղէններն են, մանտակ, ժախ, օ-
ղին, զգալուճ, ալումաղլիկ,
սպլաքուկ, պեծուկ, փնկայ,
օղորդ բոզ, կանգար, դեղ, ու-
րոց ամէնն ալ իրենց յատուկ
սարերու վրայ կը բուսնին: Գար-
նան. հարաներն ու աղլիկները
երամբին կերթան երգելով ու
զբօնելով այդ բանջարներու խ-
րաքանչիւր տեսակները իրենց
յատուկ եղբերէն քաղելու: Այս
բանջարներէն մաս մը, զոր օրի-
եակ սպլաքուկ, օղին, ուլու-
մաղլիկ և պեծուկը, թէ թարմ
կեփեն և թէ կը չորցնեն ձմեռ-
ուան համար: Միւսները թարմ
եփելէն զոտ, աղլուրի մէջ բըռ-
ուածք կը պահեն, պահք օրե-
րուն ուտելու համար: Այս ան-
մասնելի լեբանց վրայ բուսած
խաւրժիլը, իր դալարութեամբ
հաւասար է Սղնուճորոյ ու լեռ-
նային կարճկանի միջեւ անջըր-
պեա եղող կարեղ բարձրաբերձ
լեբան վրայ բուսած անման
խաւրժիլին: Հայաստանի մէջ
նարնջներ չաճելուն պատճառաւ,
խաւրժիլը իր թթուաշ ու ախոր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՔՍՈՐԵԱԼԸ

Անգամ մը երազեց որ իր աքս-
րավարէն կը փախէր ու զինուորներ
զինքը կը հալածէին, ոստիկաններ
ու պաշտպանները զինքը բռնելու
կաշխատէին:

Ինք մօտակայ անտառը մտաւ որ
հետզհետէ կը խառնար և անանցա-
նելի կը դառնար, այնպէս որ փոք-
րիկ արահետներն իսկ չէին տես-
նուեր. ալ համոզուած էր որ իր հետքը
կորսնցուցած էին: Իր չուրջը կը
լսէր պէս պէս գաղաններու անսլի
ռնոցը, բայց նա կը գերադասէր յօ-
շտուել այդ գաղաններէն, քան թէ

ողջ ողջ թուրքերուն ձեռքն իյնալ.
և այս մտածուածով ալ հետզհետէ կը
թափանցէր խիտ ու փշոտ մացառնե-
րուն մէջ որոնք իր քաղցր ծակ-
ծկելով արիւնաթաթախ կընէին:
Յանկարծ գետի մը ափը հասաւ, որ
կատաղաբար կը վազէր իր անեղ յոր-
ձանքին մէջ զալարելով վիթխարի
ժայռերն ու հուժկու արմատները:
Ալ ոչ հա եւ ոչ առաջ կրնար երթալ.
նստաւ և սկսաւ մտածել իր անորոշ
ու տարտամ վիճակին վրայ, երբ
յանկարծ գլխին վերեւ գոտոցին
հարիւրի չափ հրացաններ: Երջա-
պատուած էր թշնամիներէն, և իր
փրկութեան միակ միջոց կը մտայ
նետուել գետին մէջ. փորձեց, բայց
չը կրցար տեղէն շարժիլ. ուղեց պո-
ռալ, բայց իր ձայնը կոկորդին մէջ
խեղդուեցաւ: Պաղ քրտինքը պատեց
ամբողջ մարմինը. կատաղի թուր-

քերը զինքը պիտի ճանկէին, երբ
յանկարծ արթնցաւ...

Ու սրտեց ալ չի քնանալ, մտա-
ծել միայն այն երջանկութեան վրայ
որ արժիւթի թեւերու արագութեամբ
կը թոցնէր զինքը հոն ուր կը թա-
փոնէր միտքը եւ ուր կը ստատուէր
իր սիրտը:

Որչափ որ անցեալը սպառնական
էր և ծանր, նոյնչափ ներկան և
ապագան ուրախ և զուարթ: Մինչ-
դեռ ինք աքսորական էր. Պուլկա-
րիան ազատուեցաւ. այժմ կը յիշէր
թէ ինչպիսի կը յուզուէր պատերազմի
ժամանակ, և ի՞նչ անքուն և
չարագուշակ գիշերներ անցուց երբ
իմացաւ Ռուսաց կորուստը: Անկորս
հասնող լուրերը մեծ մասամբ անյա-
ջողութիւններ կը հաղորդէին, այնու
ամենայնիւ չէր դատարձ հաւատալէ
թէ ուրեքը վերջ ի վերջս պիտի

յաղթէին. իր յոյսերը արգարիւ ի-
րականացան:

Վերտորածին բախտ ունեցաւ Պու-
սոյ մէջ հանդիպելու պուլկար պաշի
մը, որուն փայլուն համազգեստը
խեղճ աքսորականին վրայ չեմ զի-
տեր ինչ անջնջելի սպառնութիւն
մը թողուց: Յափշտակուած ժամ մը
ամբողջ, քայլ առ քայլ սպային կը
հետեւէր զննելով անոր զգեստը,
զլիտակը, սուրը, զէմքը, փափագե-
լով լսել անոր ձայնը. ուրախութե-
նէն ինքզինքը մոռցած ամբողջ Պուլ-
կարիան իր սրտին մէջ կը կարծէր
Լսած էր Պուլկարիոյ ազատութիւնը.
Իսկ երբ սպային հանդիպեցաւ, զգաց
որ ալ ուրիշ մարդ եղած է, կարծես
աւելի մեծցած, կուրծքը լայնացած,
աւելի հանգիստ կը շնչէր. զլուրը
կը բարձրանար յաղթական, աչքերը
աւելի յանդգնօրէն կը նայէին:

Ժելի համով, տարուան առաջին եղանակին կուզայ լինել այդ պակասը:

Երկրին լեռնային ու բարձր գիրքը, իր բնական զովութեամբ, բուն Սասունի մէջ հացահատիկներու մշակութեան շինպատար: Իրենց մշակած արմուխներուն գլխաւորներն են հաճար, (տարեկան) կորեկ ու ճերմակ և պահի զԸԸԸ:

Այս լեռնոտ երկիրը գրեթէ մեծաւ մասամբ անտառապատ է, որ ինքնիրեն կը բուսնին ու կը մեծնան, կաղնի, սոսի, օշի, ալժաճարի և ծղրիխ տունկերը: Այս տեսակետով նշանաւոր է լիթիւրի Մեա լեռը, որ հեռուէն գիտողին իր թանձր ու խիտ անտառներու պատճառով, սեւադրոյն կերեւայ: Այս լեռը իր անտառային առատ հարստութեամբ՝ Մշոյ շատ մը գիւղերուն թէ շինութեան ու թէ վառելու փայտ կը մատակարարէ առատութեամբ: Աւելորդ է գրել որ անտառարանական օրէնքը տաճիկ կառավարութեան անձանօթ է դեռ:

Ընտանի կենդանիներուն տեսակներն են. եղ, կով, մաքի, այծ, ջորի և այլն, սակէ զատ, Սասունցին իր հայրենիքի լեռնային ու անտառային գիրքով ստիպուած էր շատ անգամ կոխ մղել, արջի, գայլի, վարազի ու վայրի խոզի գէմ: որոնք սակայն փաստեր կը պատճառէին իրենց ցանքերուն ու անասուններուն: Վայրի թռչուններուն մէջ՝ նշանաւոր է կօզէլ, կոչկաքա, որուն տեսակը խիտ յարգի է: Նաեւ կան ուրիշ բազմաթիւ թռչուններու տեսակներ ու վայրի կենդանիներու մէջ քանի աղբոր: Մեա լեռն անմատչելի փաղարններուն ու բարձրագոյն Մարթիոսի քարանձառներու մէջ երէնք ու եղնիկները անպակաս են:

Սասունի գետերը կը կազմուին այդ բարձր լեռներու սրտերէն ու մարմանդ հովիտներէն բխած բիւրաւոր անուշահամ ու պաղ աղբիւրներէն: Ասոնց մեծ մասը

իր ընթացքը Մշոյ դաշտին կողմը ուղղելով, կը խառնուի Մեղրազեռի հետ, որ Սիմ-Սարի ստորոտը նեղիկ հեղիկ թափելով, հարուային արեւելքէն գէպի հիւսիսային արեւմուտք զուգահեռաբար ընթացող Արածանի կամ Եփրատի մէկ բազկին հետ կը միանայ: Հիւսիսային կողմի լեռներէն ու հեղեղատներէն հասող վտակները՝ տակաւ միանալով, Եփրատ գետը կը զօրացնեն: Իսկ հարաւային կողմի բազմաթիւ վտակներն ու գետակները միանալով առանձին գետակ մը կը ձեւացնեն Պրշերլու գետ կամ Պարթման Սուր անունով: Այս գետին զլխաւոր օժանդակները կը կազմեն, Սասուն, Խիան և Խոյլը գաւառներու ակերէն ու աղբիւրներէն վաղող ջուրերը: Միւս Պրշերլու գաղտին արեւմտեան կողմէն գէպի հարաւ ընթանալով, Խարզան ու Ալիփան գաւառներու սահմանները կորցէ, Թէ այս և թէ Խոյլ, Գլեխ ու Մօտկան գաւառներու գետերու ընթացքը կատարելապէս հետադարձու համար մասնաւոր ժամանակի ու միջոցներու կը կարօտի, սակայն այս ամէն գետերը միշտ գէպի հարաւ վազելով, Տիգրանակերտի Յուրթի գաղտը կուռզեն ու իրենց պարարտ աղբով՝ բարեբերութիւն կը սփռեն Ալձնեաց հարաւային մասին դաշտերուն վրայ:

Սասունի հայաբնակ զլխաւոր գաւառակներն են, Շատախն ու Տարսիկը: միւս գաւառներու մէջ հայերը խառն կը բնակչէին քիւրտերու հետ, ու միշտ փոքրամասնութիւն կը կազմէին: Շատախն ունէր գրեթէ 13—14 հայ գիւղեր, որոց զլխաւորներն էին Շէնիկ, 85 տան մօտ բնակիչով, Կէլիէ-Կիլան՝ 120—125 տան, Յեախնք, Իշխնձուր և այլն: Անտօք սարի արեւելեան կողմը՝ հարաւ երեսոյթով մը շինուած էր անմատչելի Կէլիէ-Կիլանը որ Անտօք լեռնի պաշտպանութեան տակ, այնքան վառաւոր դեր կատարեց իր քաջարի առիւ-

ծորդիներուն վերջին պատերազմներուն մէջ:

Շատաղի հարաւային արեւմտեան կողմը, 30—40 ժամու երկայնութեամբ, ծառաղարց ու զեղափայլ երկու լեռներու խրոխտ կուրծքերուն վրայ, փռուած էին անուանի Տարսիկի 20է աւելի հայ գիւղերը, որոնք բուն Սասունի սիրտն ու շիրք կը կազմեն, և որոնց անունները ի ստորեւ կը թուենք:

Այդ անուանի ձորին արեւմտեան լանջքին՝ սիգապանձ շինուած էր 35 տան մօտ բնակչւոյ պատմական Տարսիկը: Նոյն կողմին վրայ կը գտնուին Հըքլմանք, Հրոճէք, Խարաքանչիւրը 35—40 տան: Արեւելեան կողմի լեռներու սրտերուն վրայ տարածուած էին Փուրխ, Տուալինք, Հունուտ ու Հարթուք գիւղերը, առաջին երկը 25—30 տան բնակիչներով ամէն մէկը, վերջինը՝ Հարթուք՝ 60—65 տան: Այս նեղ մուտք ունեցող ձորէն դուրս, գէպի Մշոյ դաշտն երկընցող լեռներու կուրծքին վրայ տարազնուած տուներով շինուած էին, Սըպղանք-Եղգարն, Խըլհուզիտ, Արթուխ, Գարմաւ գիւղերը իր քաքանչիւրը միջին հաշուով 25—30 տան բնակչով: Այս բոլոր գիւղերն զուտ հայկական էին, ու Սասունցիին անունը գիւցաղնացնող թեթեւաչարժ ու կրակոտ քաղ լեռնցի հայոց ազատութեան ու կուրի օրօրանները:

ՆԱՀԱ-ՊԵՏ

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ՎԵՐՍՍՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՈՒ

Փետր. 18ին Վերսայի մէջ Մերակոյար և Երեսփոխանաց ժողովը միացած, Ազգային ժողով կազմելով, նոր նախագահին ընտրութեան ձեռնարկեցին:

Նիստը այնչափ յուզեալ չեղաւ, որքան կը կարծուէր: Բոլոր ձա-

Սարսիկի մէջ գործ մը շուենք, չորեքուէն իջնալուսն պէս ձի մը կամ կտոք պիտի վարէր ու շատապէս իր ծննդավայրը:

Պրշէն նամակով մը անեցիկներուն իմացուցած էր վերագործը, հիմա կը մտածէր թէ որչափ ուրախացած պիտի ըլլան նամակը ստանալով, ինչպէս սկսած են օրերը համբել, չի պիտի քնանան, փողոցէն անցնող բոլոր կտոքերը պիտի գիտեն. իր երեսակայութեան մէջ կը պատկերացնէր իր ընտանիքը որ հեռուէն ինչպիսի իր գէմ կը վազէր:

Կը լսէր անոնց սիրտերուն արօքիւնը, կը տեսնար անոնց փայլուն աչքերը, չիկնած գէմքերը, կերեւակոյտը թէ ինչպէս կը փափագին զինքը գրկել, խօսել ու կը զգար թէ ուրախութեան յուզումէն խոտմած բաւ մը իսկ չեն կրնար արտասա-

խակողմեան կուսակցութիւնները և 177 ձերակուտական արգէն նախապէս զուժարուելով համաձայնած էին իրենց քուէն տալ Լուպէի: Աջակողմեանները և կեղծոնը իր ամբողջ յոյսը դրած էր Մէլինի վրայ, որ իրենց միակ ընտրելին էր: Բայց Մէլին՝ Լուպէի նկատմամբ եղած ցոյցերէն հասկնալով որ իր ընտրութիւնը անյաջող ելք պիտի տեսնայ, խոհեմութիւն սեպած էր բոլորովին հեռու կենալ և չի ներկայանալ իբր ընտրելի: Աջակողմեանները և կեղծոնը շուարած Մէլինի այս մեկուսացումէն՝ գիւմեցին Շառլ Տիւրբուի խնդրելու որ իբր ընտրելի ներկայանայ: Բայց Տիւրբուի ալ այնքան յուսահատած էր որքան Մէլին. ուստի մերժեց առաջարկը առարկելով որ, իբր Լուպէի անձնական բարեկամը, բացարձակապէս կը մերժէր անոր հակառակորդ հանդիսանալ:

Բայց պէտք էր ընտրելի մը գտնել, կամ բոլորովին տեղի տալ ու բեկանել իրենց կուսակցութեան պատիւը: Աւստի որոշեցին, առանց նկատի առնելու Մէլինի հրաժարումը, զայն իբր իրենց ընտրելին ներկայացնել:

Իսկ Լուպէի համակիրները հետզհետէ կաւելնային: Ժողովը դաւան ցոյցեր կը լաւին փողոցներու մէջ. «կեցցէ՛ Հանրապետութիւնը, կեցցէ՛ Լուպէն», ազազակը ամեն կողմէ կը լսուէր: Լուպէ, Մերակոյարի նախագահը, պարզ ու համեստ մարդ մը, յուզուած այս համակրական ցոյցերէն, շնորհակալութիւն յայտնեց իր պաշտօնակիցներուն և ընդունեց առաջարկը:

Նոյն օրը, կէս օրէն ետք, ժամը 1ին, Ազգային ժողովը զուժարուեցաւ: Բոլոր ձերակուտակներն ու երեսփոխանները համոզուած էին արգէն Լուպէի յաջողութեան վրայ: Եւ երբ Լուպէ երևցաւ, ամէն կողմէ բուռն ծափահարութիւններ տեղալ սկսան անընդհատ: Մերակոյարին դեր նախագահը, ժամը 3ին, քուէարկութեան արդիւնքը

նեւ: Այս երանաւէտ մտածումները, ահամայն աչքերը արցունքով կը թրջէին, ամէն ճեղ կը թափէր ուրիշ բաներու վրայ խորհուրտ համար: Զբոսը կը շարունակուէր գիտել հեռու կողմի մը, որ սեւ կէտի մը պէս կերեւար անսահման հորիզոնին վրայ. կը տեսնէր մակոյկներ, որոնք կարապի նման հանդարտ, կը լողային ձովին երեսը. հովասուն քամին կը թափանցէր իր կուրծքը և կը մեղմացնէր անոր վիշտերը:

Պ. ՍԻՐԵՄՁԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

Իր քով նստած թուրքերը ուղեցին իր ինչ ազգէ ըլլալը հասկնալ, ինք անբացատրելի հաճոյք մը զգաց իր պուլկար ըլլալը յայտնելով. և ալ չի նետաքրքրուեցաւ անոնցմով:

Սակայն սիրտը նորէն պտտուութեամբ կը սեղմուէր, երբ կը մտածէր թէ Մակեդոնիան զեռ սարուէ է, բայց կրկին կը հանդիսանար, խորհելով որ Մակեդոնիոյ կտին կեցած է ազատ Պուլկարիտն: Եւ անշուշտ անոր ազատութեան ճառագայթներէն շող մը գէթ կը նշուէր Մակեդոնիոյ վրայ և կեոսացիներ սարուկներուն սիրտը:

Երբեմն Շուլկարիան իր աչքին կերեւնար զուարթ ու թարմ կոյսի մը նման, որուն ճակարկ վրայ կը շողար փողփողուն աստղ մը. երբեմն ալ կորովի, առոյգ պատանիի նման՝ յաղթական սուրն ի ձեռին. և ահա

այդ երկու լուսաղեղ գէմքերը կը ծռէին Մակեդոնիոյ վրայ և կը փափայլէին անոր ակունքն ի վարձայն սայլ, սպասէ և հատաստ:

—Աստուած իմ, կը մրմնջէր խեղճ աքորտա՛տնր. Մակեդոնիան ալ ազատ տեսնած և յետոյ մեռնիմ:

Ինքը ծրարած էր Պուլկարիտ անցնել, թէև Մակեդոնիոյ մէջ ստուն և կարուած ունէր. բայց այդ բոլորն ալ պատրաստ էր լքելու և իր օրակարգը միմիայն ճարտու արամաղի, կը փափագէր Պուլկարիտ մտնել, ազատ կեանքի քաղցրութիւնը ձաշակելու. վճռած էր իր հեռ վերցնել իր կիներ և երեսները:

Շուկեաւը ուժով կը ճեղքէր ալիքները և կը սլանար գէպի իր սիրելի երկիրը: Բիշ մըն ալ, ու պիտի հասնէր:

յայտնեց ժողովականներուն: 24 քուէարկուցներու մէջ, 279 ի գէմ 483 ձայնով, Լուպէ նախագահ անուանուեցաւ. 50 քուէ զանազան անձնու վրայ ցրուած էին և 12 ճերմակ քուէ ելած էր:

Նոր նախագահը անմիջապէս Վէրսալէն Բարիզ եկաւ, և ուղղակի Արտաքին գործոց պաշտօնատունը երթալով ընդունեց Տիւրքիին և նախարարութիւնը որեկած էր շնորհաւորել իր ընտրութիւնը և ըստ սովորութեան, իր հրաժարականը մատուցանել: Լուպէ խնդրեց որ դահլիճը շարունակէ իր պաշտօնը: Յետոյ առաջին այցելութիւնը տուաւ իր նախորդին Ֆէլիքս Ծօռի այրիին:

Լուպէ, որ Տրէյֆիւսական գործերու մէջ ու է մասնակցութիւն ունեցած չէ, պիտի կարողանայ անշուշտ խաղաղեցնել Ֆրանսան իր վերջին անպատիւ յուշումներէն և բարձրացնել անոր ժամանակէ մը ի վեր ինկած վարկը: Լուպէի ընտրութիւնը ամենէն յաջող և ժամանակին պահանջներուն ամենէն յարմարն էր:

Ֆէլիքս Ծօռի մահուան առթիւ ամէն կողմէ ցաւակցական հեռագիրներ կը հասնին: Հասած առաջին հեռագիրը եղած է Գերմանիոյ կայսեր կողմէ, երկրորդը իշխան Ֆէրտինանը ուղղած է:

—Ֆէլիքս Ծօռի մարմինը զբնուստած, ի տես դրուած է Էլիզէի մէջ: Մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնուին փառաւոր յուղարկաւորութիւն մը կատարելու համար:

—Ֆէլիքս Ծօռի թաղման արարողութիւնը կատարուեր է անցեալ հինգշաբթի օրը:

Մ Ա Կ Դ Ո Ւ Ի Ա

Ռուս կառավարական շրջանակներուն մէջ, Սուլթանական դերդուստով կազմուած Իւլէքի ալպանական ժողովը շատ զէջ ապաւորութիւն ձգեր է: Մակեդոնիոյ մէջ Բ. Գրան տեսած զինուորական պատրաստութիւնները, կըսէ ռուսական թերթ մը, կրնան մասամբ արդարացում գտնել, բայց ալպանիացիներուն մասնակցութիւնը և անոնց սպառնալից ցոյցերը, ոչ միայն աւելորդ էին, այլ նոյն իսկ վտանգաւոր:

—Պոլսոյ ռուսական դեսպանը, Պ. Զինովիէվ, գիտել աւել է Բ. Գրան թէ՛ այդ ալպանական շարժումները կրնան աւելի վտանգաւոր ըլլալ Մակեդոնիոյ համար, քան թէ Պուլկարիոյ շարժումները:

Զինովիէվ, ամսոյս վերջը Ս. Բեթեւսպուրի պիտի ուղեւորի իր կառավարութենէն նոր հրահանգներ ստանալու համար:

—Պօսնայ-Սէրայի մէջ հրատարակուող «Բէհայէր» լրագիրը Մակեդոնիոյ մասին անհեթեթ յօդուած մը հրատարակած է, ուրկէ

հատուած մը կը գնենք հոս իբր նմոյշ:

«Ներպական լրագիրներէն ումանք, կըսէ «Բէհայէր», անուղղամտութիւնը սկզբունքի կարգ անցուցած են: Խռովութիւն կը սերմանեն աշխարհի մէջ և Մակեդոնիան ցոյց կուտան իբրև խռովութեանց ու անիշխանութեանց մատնուած նահանգ մը: Այս ամէն ըսուածներուն մէջ ճշմարիտ բան մը չիկայ: Չենք կրնար բերուել թէ այս շառաւթանները ի՞նչ ըսել կուզեն Մակեդոնիոյ խնդիրը ըսելով: Մենք չենք գիտեր որ Ներպական Թուրքիոյ մէջ «Մակեդոնիա» անունով նահանգ մը գոյութիւն ունենայ (•••): Բուժէլիլի մէջ այդ անունով վիլայէթ չիկայ: Մեր գիտցածը սա է որ, բոլոր նահանգներուն մէջ անգործութիւնն ու կարգապահութիւնը կը տիրեն: Իրաւ է որ Պուլկարիոյ մէջ «Մակեդոնական» կոչուած յեղ. քոմիթէ մը կայ այնպիսի մարդոցմէ կազմուած որոնց ուսկից կլլելը յայտնի չէ, բայց այդ որդնոտ խառնակոյտին գործերը մտատանջութիւն պատճառելու տեղ, ծիծաղ կը շարժեն»:

Մենք ալ չենք կրնար մեր ծիծաղը գոսել «Բէհայէր»ի անուղիղ խմբագրին այս տողերը կարդալով: «Բէհայէր», և իրեն հետ բոլոր թուրք մամուլը որ արտառոց սուտերով կը ջանայ մուլեւանդ ու սգէտ թուրք ամբողջ խաբել, թո՛ղ վստահ ըլլայ թէ, ամբողջ Ներպա գիտէ ու ճանչցած է Մակեդոնիոյ գոյութիւնը, և իր տղիտութիւնը մաղի չափ կարեւորութիւն չունի: «Բէհայէր» և իրեն նմանները լաւ կընեն փոխանակ այդ տեսակ խայտառակ սուտերով ժողովուրդը քնացնել աշխատելու, բուն ճշմարտութիւնը աշխատին ճանչցնել անոր և անոնց դարմաններուն վրայ խորհիլ: Թերեւս այն ատեն հարկ չի մնար անամօթ սուտեր ստեղծելու:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարաց խորհուրդը իշխանին հաւանութեան մատուցած է արդի Սօպրանիէին լուծման և նոր երեսփոխաններու ընտրութեան մասին պատրաստուած հրովարտակը, բայց Ն. Ա. Բ. Իշխանը յետաձգեր է անոր վաւերացումը:

—Պերլինի մէջ նախարարական տագնապի մը զրոյցը սկսած է հաստատութիւն գտնել: Մէկ կողմէ առեւտրական ու կրօնական գործոց նախարարներուն, և միւս կողմէ Արտաքին գործոց նախարարին ու վարչապետին միջև անհամաձայնութիւններ ծագած են: Կըսուի թէ պիտի հրաժարին:

—Անգլ. կառավարութիւնը կը սպառնալիք Իռլանտայի ծովուն

բերանը գտնուած Պրիստոլի ջրահեցքը:

—Մալթաի մէջ կատարուած ռազմափորձերու ատեն, անգլ. Սկիլլա մարտանաւը թորփիլ մը արձակեց իր բուն շոգենաւին վրայ, հեռաւորութիւնը սխալ չափուած ըլլալով: Շոգենաւը անմիջապէս ընկղմեցաւ: Իոյր նաւաղները ազատուեցան: Մէկ քանի վիրաւորներ միայն կան և մեքենավարը խեղդուած է: Քընտութիւն մը բացուեցաւ:

—Անցեալ շաբթու Նիւ-Եորքի մէջ սաստիկ ձիւն տեղացեր է, այնպէս որ բոլոր հազարակցութիւնները ընդհատուեր են, անցուղարձը դադար է: Ոստիկանութիւնը ձիւներու տակ սառած բազմութիւն դիակներ գտեր է: Քաղաքին ջուրը սպառած է, աղբւրները սառած ըլլալով: Բնակիչները ստիպուեր են ձիւնը հալեցնել: Մեռածներու դիակները անթաղ կը մնան, որովհետեւ անկարելի եղած է գերեզմանատուններուն մօտենալ:

—Հունգարիոյ նախարարացեալ Պարոն Պանֆի հրաժարականը տուեր է:

Ք Ր Ո Ն Ի Կ

Ս. Պատրիարքը ցաւակցական և մխիթարական հեռագիր մը զըրկեր է այրի Տիկին Ֆէլիքս Ծօռի, և անձամբ Ֆրանսական դեսպանատունը երթալով ցաւակցութիւն յայտներ է դեսպան Մ. Գոնսպանի:

—Օրմանեան Պատրիարքին հայ ունեւորներուն ուղղած շրջաբերականը վանի սովելոց մասին, կերեւայ թէ բաւական յուզում պատճառած է Պոլսոյ հարուստներուն մէջ, որոնք հետզհետէ նըպաստներ կը զրկեն այդ նպատակաւ, ատենք մաս առ մաս իրենց տեղերը կը զրկուին: Փայլազելի էր որ արտասահմանի հայ հարուստներն ալ փութային մասնակցիլ իրենց հայրենակիցներուն նպաստելու գործին:

—Էջմիածնի Սինոդը ներքին գործոց նախարարին վաւերացման մատուցել է Ա. Ժ. Երթանի մէջ հիմնուելիք թեմական դրոյրոցին հիմնական կոնոնները, զորս կազմեր է թեմակալ առաջնորդը՝ Սեդրակեան Արիւտակէս եպիսկոպոս: Նոր դպրոցը պիտի ունենայ վեց դասարան, ուր պիտի աւանդուին բոլոր այն առարկաները որոնք կը տրուին միւս թեմական մեծ դպրոցներուն մէջ:

—«Նոր-Պար» շաբթ մը յօդուածներով կը գանդատի թէ Ռուսիոյ հայոց վարժարաններուն (•) մէջ պէտք եղածին պէս հոգ չի տարուի կրօնի կրթութեան: Շատ անգիր տղէս քահանաներու ձեռքը մնացեր է այս գործ, որոնց գոնէ վարքն ու բարբըր գովելի օրինակ չեն աշակերտներուն:

րուն: Ս. Հայրապետը Տիկինի օրհնորդարանը հաւաքեր է ամէն կարգի կրօնի ուսուցիչ հայ քահանաները, և հարկ եղած դիտողութիւններն ընելով, հրահանգներ տուեր է:

—Գրիգոր Գարակէօզեան խնդրեր է Ազգ. Վարչութենէն փութացնել նոր որբանոցին կառուցման համար կառավարական գործողութիւնները: Մտադրութիւն կայ եղեր յառաջիկայ գարնան շինութիւններն սկսիլ:

ԿՈՒՋՈՒԻ

13—14 տարեկան տղայ մը որ ձեռագիր կարգալու չափ կարող ըլլայ գրաշարութեան համար Գրիմի խմբագրութեանս:

ՊՕՐՍԱ

Table with 2 columns: Time/Category and Price. Includes entries for 13-14 year olds, 15-20 year olds, and 21-30 year olds.

Ք Ր Ո Ն Ի Կ

Table with 2 columns: Time/Category and Price. Includes entries for 55-57 year olds, 58-60 year olds, and 61-70 year olds.

ՎԱՐՈ

Երկու Սէր (ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱՆ ԿԵՍՆՔԻԾ) (Գին 1 Ֆրանկ) Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժուի խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մաղախեանի սրճարանը:

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԵՊՄ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ Պատրիարք Քրիստոնեական Եկեղեցւոյ ԿԱԼՈՅ Տպարան «Անի» 1898 Գին 3.50 Ֆրանք Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պալենց գրատան և Ֆօքչան (Ռուսմանիա) Վ. Մամիկոնեանի մօտ:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնիլ կօշիկներ որոնք իրենց վրայ միացուեն ձեռի եւ դիմաց կուսութեան կատարելութիւն եւ մանաւանդ զինի չափաւորութիւն, առանց վարանելու դիմեցէ՛ք Սաեփան Խօրասանճեանի, Մուսայիւ, բաղնիք փողոց, հաճի Հասան էֆէնտի օթէլին տակ, հաւաստեցէ՛ք թէ առիթն պիտի օգտուիք:



Отговорникъ: А. СУКЯСОВЪ Печатница „Взаимность“ Варна.